կեանքի վրա։ Թիւտ վերահսկողութիւնը ասանողի վրա զրկում է նրան բարոյապէս և մտաւորապէս ազատ զարգանալու միջոց, դրդում է նրան, շատ անգամ, ընկնել ծայրայեղ, վնասակար ուղղութեան մէջ և գրաշում է նրա ճակատին, նրա ապագայ ամբողջ կեանքի ընթացքում, անկախ, անշատական համոզմունքներից զուրկ մարդու դրոշմ։ Այն ինչ, երբ վերցրած կը լինի այդ խիստ, պոլիցիական վերահսկողութիւնը գիտութեան ազատ տաճարի սահերի վրայից, երբ տրված կը լինի համալսարանական ուսմանը և դաստիարակութեանը կատարեալ ազատութիւն,—այն ժամանակ ուսանողների մէջ կը զարթնի իրանց պէտքերի ինքնաճանաչութիւնը և դրա հետ միասին նրանցից իւրաքանչիւրի պատասխանատուութեան ճանաչելը ընդհանրութեան խիստ պահանջների առջև։

Ազատութեան հետևանքը միշտ լինում է իւրաքանչիւր անհատի պատասխանատուութեան և իր անձնական բարոյական պարտքի ճանաչելը։

Գ. Ա.

ՆԵՐՔՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽԻՑ

—

Դեկտեմբերի 15

Շամախու աւետարանական փոքրիկ միաբանութիւնը ի մոի ունէր դարձեալ մի ստորագրութիւն արձանագրութիւններ,—բոլորը թղթերի կտորտանքի վրա գրած, և խառն, անկարգ կերպով, խողովակի ձևով, միմեանց վրա փաթաթած։ Նոյն գօտի մէջ խրած էր նրա երկայն, նաչխուն թանաքամանը իր բաղմաթիւ եղէգնեայ գրիչներով։ Նոյն գօտիից քարշ էր ընկած բազմաթիւ կնիքների մի փունջ, հագիվ կոչված քարի վրա փորված, և արծաթի կոթերով բռնված։ Մունշի-բաշիի չուրջը հաւաքված էին իր ստորադրեալ միրզաները (գրագիրները)։ Նրանք էլ ունէին իրանց գօտիի մէջ թղթերի փաթաթներ և թանաքամաններ։ Այստեղ նոյնպէս բազմութիւնը զանազան խնդիրքներով զիմում էր մունշի-բաշիին՝ խանի գլխաւոր քարտուղարին, այս և այն թղթերն էր պահանջում։ Այստեղ նոյնպէս չատերը մօտենում էին, չոքում էին նրա առջև և ականջին բաներ էին փսփսում...

—Այս մարդու թուղթը պատրաստ չէ, գառնում էր նա գրագրներից մէկին։

—Պատրաստ է։

—Ինչու չէք տալիս։

—Դեռ բ ո ւ ս ա ն ա ն մը չեմ ստացել։

Բուսանումը այն ընծան էր, որ պիտի տար թղթի ստացողը գրագրին։ Յետոյ սկսվում էր երկար սակարկութիւն այդ ընծայի քանակութեան մասին։ Կաշառակերութիւնը կատարվում էր հրապարակաւ, որովհետև դա ընդունված մի սովորութիւն էր։

Բազմութեան մէջ մի դղրդոց ընկաւ և դէպի ամէն կողմ տարածվեցաւ խուլ չշունչ։ «Խանը գալիս է»։ Բոլորը ոտքի վրա կանգնեցան։

Կանանոցի կողմից յայտնվեցաւ խանը։ Նրա առջևից ընկած էին մի խումբ չաթրներ, իսկ ետևից գալիս էին մի խումբ ֆէրրաշներ։ Ինքը միայնակ, մէջ տեղում, վառվում էր ոսկու, արծաթի և գոհարների մէջ։

Մինչև դիւանխանէն հասնելը բաւական տարածութիւն կար։ Մի քանի տեղ կանգնեցրին նրան։

—Խան, քո ոտներին մատաղ լինենք,—խընդիր ունենք... Ձայն տուեցին մի քանի հոգի, որոնք ոչ ճանապարհի եզրում չոքած, անդադար համբուրում էին գետինը։

Դրանք գիւղացիներ էին, որ կռիւ էին ունեցել ուրիշ գիւղացիների հետ, մի քանիսը վիրաւորված էին, և վէրքերի արիւնը տեսնվում էր նրանց հագուստի և երեսների վրա։

—Ֆարաշբաշի, հրամայեց խանը իր ժանդարմների գլխաւորին,—մարդիկ կուզարկես, բռնել կը տաս այն չարագործներին, և քանի հոգի որ լինեն, իւրաքանչիւրից քսան թուման ջարիմա (տուգանք) առնել կը տաս, լաւ պատժելուց յետոյ։

Գանգատաւորները գետինը համբուրելով, սկսեցին գոչութիւն յայտնել և օրհնել խանի կեանքը, խանը անցաւ։

—Ձեր ոտներին մատաղ լինեմ, ասաց ֆէրրաշ-բաշին հագիվ լսելի ձայնով,—միւս գիւղացիների մէջ նոյնպէս վիրաւորներ կան և երկու հոգի սպանված են...

—Այդ մի և նոյն է, պատասխանեց խանը,—որովհետև դրանք առաջ գանգատվեցան, պէտք է դրանց դատը վճռել։ յետոյ կը լսենք, թէ միւսները ինչ են ասում...

Պարսկական դատաստանի կէսից շատ ճիշտ էր խանի վճիռը։ Երկու գիւղի մարդիկ միմեանց հետ կռուել էին։ մի կողմը չատպեց, գանգատվեցաւ և բաւականութիւն ստացաւ։ Երբ կը յայտնվէր միւս կողմը, նրան էլ «կը լսէին», այն ժամանակ առաջինների պատիժը գուցէ աւելի սաստիկ կը լիներ։ և այսպիսով երկու կողմն էլ «ջարիմայ» վճռած կը լինէին, և այդ աւելի օգտաւէտ էր խանի գանձարանին։

—Խան, քո ոտներին մատաղ, խնդիր ունենք... Ձայն տուեցին մի քանի հոգի, որոնք նոյնպէս ճանապարհի եզրի վրա չոքած համբուրում էին գետինը։

—Ինչ է ասելիս։

—Ֆարաշբաշի, հրամայեց խանը իր ժանդարմների գլխաւորին,—մարդիկ կուզարկես, բռնել կը տաս այն չարագործներին, և քանի հոգի որ լինեն, իւրաքանչիւրից քսան թուման ջարիմայ (տուգանք) առնել կը տաս, լաւ պատժելուց յետոյ։

Գանգատաւորները գետինը համբուրելով, սկսեցին գոչութիւն յայտնել և օրհնել խանի կեանքը, խանը անցաւ։

—Ձեր ոտներին մատաղ լինեմ, ասաց ֆէրրաշ-բաշին հագիվ լսելի ձայնով,—միւս գիւղացիների մէջ նոյնպէս վիրաւորներ կան և երկու հոգի սպանված են...

—Այդ մի և նոյն է, պատասխանեց խանը,—որովհետև դրանք առաջ գանգատվեցան, պէտք է դրանց դատը վճռել։ յետոյ կը լսենք, թէ միւսները ինչ են ասում...

Պարսկական դատաստանի կէսից շատ ճիշտ էր խանի վճիռը։ Երկու գիւղի մարդիկ միմեանց հետ կռուել էին։ մի կողմը չատպեց, գանգատվեցաւ և բաւականութիւն ստացաւ։ Երբ կը յայտնվէր միւս կողմը, նրան էլ «կը լսէին», այն ժամանակ առաջինների պատիժը գուցէ աւելի սաստիկ կը լիներ։ և այսպիսով երկու կողմն էլ «ջարիմայ» վճռած կը լինէին, և այդ աւելի օգտաւէտ էր խանի գանձարանին։

—Խան, քո ոտներին մատաղ, խնդիր ունենք... Ձայն տուեցին մի քանի հոգի, որոնք նոյնպէս ճանապարհի եզրի վրա չոքած համբուրում էին գետինը։

Դրանք նոյնպէս գիւղացիներ էին, որոնց ոչխարները գողացել էին. բայց գողը յայտնի չէր. ոչխարների տէրերը «վասկած» էին յայտնում գող Քէրիմի վրա, ասում էին նրա գործն է, խանը հրամայեց Քէրիմին կալանաւորել, ոչխարները առնել, իրանց տէրերին յանձնել, և յիսուն թուման էլ «ջարիմայ» առնել Քէրիմից յօգուտ գանձարանի։ Այդեօք Քէրիմը յանցաւոր էր այդ գողութեան մէջ, թէ ոչ,—քննութիւն չեղաւ. քննութիւնը միշտ մնում էր վճռից յետոյ։ Այսինքն, երբ Քէրիմից ոչխարները կառնէին գիւղացիներին կը յանձնէին, և յիսուն թուման էլ «ջարիմայ» կառնէին յօգուտ գանձարանի,—այնուհետև երբ կը յայտնվէր, որ Քէրիմը մեղաւոր չէ, այն ժամանակ կրկին ոչխարները գիւղացիներից կառնէին և կը տային Քէրիմին, և յիսուն թուման էլ նրանցից «ջարիմայ» կառնէին, որովհետև սուտ ասեցին։ Այսպիսով երկու կողմից էլ գանձարանը կը շահվէր, բացի դրանից, ոչխարները անդադար մէկից առնելով և մէսմին տալով, ամեն անգամ «դահնէք» (տաճառորդ) կը վեր առնէին նոյնպէս յօգուտ գանձարանի։

Այսպէս, խանը մինչև իր դիւանխանէն կամ դատարանը հասնելը, ճանապարհին, ոտքի վրա, մի քանի գանգատներ լսեց, մի քանի վճիռներ տուեց, բոլորը մի խօսքով, բոլորին բուսական ուշադրութիւն դարձնելէն յետոյ։ Դրսում, բաց օդի մէջ, աւելի հեշտ էր դատախազներին իրանց բողոքները նրա ականջին հասցնել. բայց երբ նա մտնում էր իր դիւանխանէն, այն ժամանակ բոլորովին անմատչելի էր դառնում։ Գանգատաւորը պէտք էր ֆարաշբաշուն զիմէր, մունշի-բաշուն զիմէր, և ով է իմանում, հարիւրաւոր չունչագրի պէտք է զիմէր, մինչև նրան թոյլ կը տային մերձենալ խանին և իր գանգատը յայտնել։ Բայց մինչև այդ թոյլատրութիւնը ստանալը, նա սոսկալի էր ամենին «փիշքէշներ» տալ...

Խանը արդէն մօտեցել էր դիւանխանէին։ Ամբոխը ամեն կողմից յետ էր քաշվում և մինչև գետին գլուխ էր տալիս։ Ֆէրրաշները իրանց ձեռքի վարդակներով գանակոծում էին հանդիպողին, ով որ փոքր ինչ ուշ էր շարժվում և ճանապարհ չէր բաց անում։ «Բրօ... բրօ... (հեռացիր, հեռացիր) գոչում էին չաթրները երիվարը և սարապը, տենդային ցնցումների նման, անցնում էին ամբողջ ամբոխի մէջ։ Մի մեռելային լռութիւն տիրել էր այդ ահագին բազմութեան վրա, միայն լսելի էին լինում ֆէրրաշների ու չաթրների զզուշացուցիչ ձայները։ Ցանկացած հեռուից մի աղաղակ բարձրացաւ և ամբոխի ուշադրութիւնը դարձաւ դէպի այն կողմը։

—Այրվեցան... այրվեցան... հայերը այրվեցան... լսելի եղան խուլ ձայներ։

Կարծես, մի ահագին հրդեհ բռնավառվում էր խանի դիւանխանէից փոքր ինչ հեռու։ Թանձր ծուխը, խառն հրդեղէն ալիքների հետ, բարձրանում էին դէպի երկինքը։

—Այդ ինչ է այրվում, հարցրեց խանը, կանգնելով դիւանխանէի առջև։

—Հայեր են... պատասխանեց ֆարաշբաշին, այնպիսի մի սովորական եղանակով, կարծես թէ, այրվող նիւթը փայտ, խոտ կամ յարդ լինէր։

Ֆէրրաշները հրամայեցին ամբոխին յետ քաշվել, որ խանը տեսնէ այդ տարօրինակ տեսարանը։

Բոցերի և թանձր ծխի մէջից երևում էին մի քանի մարդիկ։ մայրը գրկել էր իր երեխան, նրանցի հայրը ընկած էր որդու բազուկների վրա։ մի քանիսը, անչարժ կանգնած, ձեռքերը դէպի երկինք բարձրացրած, գոչում էին «գթութիւն... գթութիւն»... մի քանիսը ընկած էին գետնի վրա, ձայն չէին հանում... Տեսարանը սոսկալի էր։ Այրվում էին կենդանի մարդիկ։ Այրվում էին ամբողջ մարմնով, իւրաքանչիւրի մէջ թաթախած պատրաստների նման։ Ոչ ոք չէր մօտենում այդ տարօրինակ դէպքը չիրականացնելու համար։ Նա պիտի էր, նա կարող էր ուղղափառ մահմեդականին պղծել։ Բոցերը փոքր առ փոքր լափում էին նրանց և կանգնածները գլորվում էին ցած։ Մի մարմին ընկնում էր ուրիշ մարմնի վրա և ձևացնում էր գնդակների մի կոյտ—մի մարդկային խարոյկ, որ

Դժուար է հասկանալ այդպիսի առաջարկութեան արժանաւորութիւնները։ Ամենից առաջ դժուար է երևակայել, թէ նոր կոնֆերենցիան ինչով պէտք է զբաղվի։ Կոնֆերենցիային կը մասնակցեն վեց պետութիւնների ներկայացուցիչները, որոնք արդէն մի անգամ վճիռ են կայացրել։ Յունաստանի ներկայացուցիչը, որ համաձայնել է պետութիւնների նախկին վճռի հետ և Թիւրքիայի ներկայացուցիչները, որ չեն համաձայնուում տալ Յունաստանին զրաւել Նրան վիճակված երկիրը։ Այս պայմանները ի նկատի առնելով՝ նոր կոնֆերենցիայի եօթ անդամները ձայն կը տան յօգուտ Բերլինի կոնֆերենցիայի վճռի, իսկ մէկը նրա դէմ։ Ուրեմն այդ նոր առաջարկութենից Թիւրքիան ինչ օգուտ կունենայ։ Ի՞նչն է Նրան տալիս յուսալու, որ նոր կոնֆերենցիան կը տարի Յունաստանին չափաւորել իր պահանջները։

Վերջապէս ի՞նչ ապահովութիւն կայ, որ նոր կոնֆերենցիայի վճիռները կիրագործվեն։ Ենթադրենք, որ եւրոպական մանամիտները սահմանագիծը անցկացնելու ժամանակ արգելքների չի հանդիպի։ Այս դէպքում սահմանագիծը կորոշվի, բայց այնուամենայնիւ Յունաստանը միջոց չի ունենայ զրաւել իրան տուած երկիրները։ Դուլցինիօի օրինակը ապացուցեց, որ Բ. Դուռը մինչև անգամ առանց իր զօրքերի օգնութեանը դիմելու կարող է արգելել Յունաստանին, որ նա գրաւի իրան վճռակված նահանգները։

Դժուար չէ ուրեմն հասկանալ, որ Բ. Դրան նոր առաջարկութիւնը դիպլոմատիական մի խորամանկութիւն է։ Թիւրքայ կառավարութիւնը կամենում է յետաձգել միջոցով դատարանի կայանալը։ Բ. Դուռը յոյս ունի, որ նոր բանակցութիւններ կըսկսվեն, որոնք գործը կերկարացնեն։ Յունաստանի հետ գործ ունենալով, Թիւրքայ կառավարութիւնը կարող է յուսալ, որ եթէ գործը երկարի, Յունաստանի ֆինանսական միջոցները այնպէս կը վատանան, որ նա անկարող կը լինի պատերազմ ըսկսել և այն ժամանակ Թիւրքիան կարող է իր ցանկացած զիջումները միայն անել։

Մեծ անխոհեմութիւն կը լիներ թոյլ տալ, որ այդ խորամանկութիւնը կատարվի։ Եւրոպան համոզված է, որ յոյն-թիւրքական հարցը կարելի է միայն միջոցով դատարանի օգնութեամբ լուծել։ Գուցէ այդ միջոցը անաջողութեամբ է ընտրված, բայց քանի որ մի անգամ որոշված է, այլ ևս պէտք չէ յետ կանգնել։ Յունաստանը չէ կարող սպասել և նրա համար մեծ նշանակութիւն ունի իւրաքանչիւր շաբաթը, որովհետև յունական զօրքերը հաւաքված են և նրանց համար մեծ ծախսեր են անվում։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԱՑԻՑ

—

Աւստրիա, Նոյեմբերի 14

Առաջին թղթովս գուժեցի ձեզ հայ աղջկայ բռնաբարումն երկու քրդաց կողմէն։ Մի յուսաք, թէ սա տարբեր մի երևութով պիտի ներկայանայ ձեզ և այնիւ ընթերցողացդ, սա ալ գրեթէ նոյնքն է ինչ որ էր իր նախորդն, այսինքն մի խժդժական իրողութիւն։ Ամսաթուէս 5 օր առաջ Հողաբերդի գայմագամ Մուստաֆա էֆէնդի Խաստուր ըսուած հայաբնակ գիւղը երթալ կուզէ, և իրմէ առաջ ոստիկան մը կը խրկէ գիւղ գալն ծանուցանելու, բայց հոն գտնում էմլաքի (կալուածոց) երկու տաճիկ պաշտօնատարներ կը գրեն իրեն (գայմագամին), թէ գիւղին մէջ սենեակ չի կայ իր ատոիճանին յարմար և վայելուչ, և թէ իրենք արդէն գիւղացւոց հետ ընդ փոյթ կարգադրելու վրայ են հոգալին և կալուածական գործերն և կացարէն գալն երկու օր յետաձգել։ գայմագամն կընդունի գայս, սակայն գիւղերը ժամ 2-ի միջոցներն (ըստ Թրքաց) չը գիտեմ որ սատանան կը դրդէ գինք ելնել ու գիւղ գալ յանկարծակի և սենեակ պահանջել անպատրաստ գիւղացիներէն՝ որք սենեակ չունենալով կը շտարին կը մնան։ գայմագամն զայրանալով սենեակ պատրաստելու համար գինքն սպասեցնելուն, կը սկսի Գէորգ Քէհեան սատիկ գանգատիլ և գանգատիլ տալ, մինչ զի վերաւոր կը փռուի գետին, իսկ իր բարի և հաւատարիմ դրացիներէն պ. Յովսէփ Նահապետեան երբ կը վազէ իր դրացւոյն ազատութեան և միջնորդ կըլլայ աղաչաւոր։ Հոս, կեսվուրլար, սիլ ազմշչարնը, սիզին ֆիքրինիզ պաչկա զրը, կիւվէնէնէլինիզ վար հէ, եաթրրզն չու կիսայուրուչ կըսվ, գայմագամն և կը հրամայէ իր մարդոց, որք գաղանական վայրենութեամբ կը թափին խեղճ Յովսէփի վրայ և նորա զօրաւոր դիմադրութեան վրայ առաւել կատաղելով ականջներէն կը խածնին ու կը ձգեն գետին։

Թիւտ սոսկալի կը պատմեն այս գաղանական տեսարանն, ուր կանայք ու տղայք կը լան ու կաղաղակեն իրենց գիւղի մեծաւորի ազատութեան համար, սակայն գայմագամի սպասաւորք սուր բանալով կը յարձակին նոցա վրայ։

Գանգատեալներն բաւական ծանր կերպով վիրաւորուած են, այնպէս որ հարիւ վեց ամէն կը բուժի նոցա վերքերն, զի լուծքի փայտերով և հատ բեկելով են ծեծուած. մարմիններն բոլորովին կապուտցած է։

Աւ զիարիս է ձեզ գուշակել, թէ ինչեր չեն պատահեր և քրդաց կողմէն, երբ մի պաշտօնական մարդ, որ իր ափի մէջ պիտի վարէ ժողովրդան անգրագիտութիւնն և հանգստութիւն, մի վայրագ և ապերասան զորձով լուսնայն կը քաջալերէ զիւրան, երբ տեսնին զայս քուրդեր, որք արդէն փչացած են կարի՝ Շէյխի արշաւանքէ, առաւել պիտի սրտապնդին բարդելու չարիս ի վերայ չարեաց, հաստատապէս հաստատելով, թէ Շէյխ Պարակատանի յաղթելէ վերջ անչուշտ այս կողմեր պիտի վերադառնայ ձմռելու և զվրենք պաշտպանելու ռահայոց կարծեցեալ արշաւանքէն։

Խլամք առհասարակ սկսած են խեթիւ և մախանաք նայել հայոց վրայ, որք, արդարև, թուլասիրտ չեն անչափ, բայց անզէն, անհաց, անդրամ, և անառաջնորդ են. և այս բոլոր չըզոյութիւնք միանալով այս յարմար և պատուական երկրի ժողովրդեան վրայ, թուլասիրտ երեւելու չափ վճռացուցած են զիրենք։

Կառավարութիւնը ամենայն խստութեամբ տուրքերը կը հաւաքէ առանց խնայելու սովալլ ժողովրդին, որոյ վրայ հարկ էր տանել խնամ հայրագորով, սակայն ով չի գիտեր թէ Թրքին մտքովն է՝ ի յաւիտենից անտի՝ բուրդը խուզել առանց մսին խորելու։

Կառավարիչ փաշան՝ որ գիտեմս, նենգաւոր և քրիստոնէից հակառակ մը պաշտօնատար է, տեղի տուաւ ժողովրդեան կարծեաց թէ ռուսաստաբ կուգան. և Ս. Յովհաննու (Իւչքիլիսէ) գրան քովիր մի քանի ռուսական ուխտաւորներ (կամ նոցն գլխով մարդեր) տեսնելով՝ գրեց կուսակալին թէ յեղափոխութիւն կայ, զոր զսպելու կամ արգելելու համար կարնին հեծելազօր և հետևակ 3000-էն աւելի զորաց կը սպասուի. ժողովրդը բնաւ չի յուսար թէ այսպիսի մի հեռաւոր խորշի մէջ այդ կանոնաւոր զորքերն պաշը—պտուղներէ ո և է տարբերութիւն ունենան։ Սակն կանց կանց կը կատաղի, այս ձմեռ աւելի ծանր պիտի ըլլայ։ Կառավարիչը բողոքականաց կողմէն եկող սովելոց գործակալն արգելից իր պաշտօնն գործադրէլ, առ ոչինչ համարելով Կարնոյ Բրիտանական քրդասէր հիւպատոսին յանձնարարագիրն։

Անցորդ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳՐԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 դեկտեմբերի։ Երէկ Թագաւոր Կայսրը ընդունեց յայտնի Ճնապարհորդ Նորդենշիլդին։ „Новое Время“ հաղորդում է. տարածված լուրերը Լոփ կասեան փոխարքայութենից երկու գլխաւոր նահանգապետութիւն կազմելու մասին տարաժամ են։

ԼՈՆԴՈՆ, 24 դեկտեմբերի։ Երէկ կառավարութիւնը նիստ ունեցաւ իրլանդական գործերի վերաբերութեամբ, որին մասնակցեցին բոլոր մինիստրները։

ԿԱՊԵՏԱՏԴ, 24 դեկտեմբերի։ Բոերների զինաւորված խումբերը մեան Նատալ, որպէս զի խանգարեն անգլիական զօրքերի շարժմանը։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

աւելի հեշտ կարող էր վառվիլ։ Բոցերի մէջից դեռ լսելի էին լմնում խուլ հառաչանքներ, շարժվում էին ձեռքեր, որ բարձրանում էին դէպի սառնասիրտ երկինքը... Մեղմ քամին տարածում էր ճենճերային խանձահոտութիւնը դէպի ամէն կողմ։ Դա մի կատարեալ մարդասպանութիւն։

Այրվում էին կանայք, երեխաներ, այրվում էին ալեորներ և առոյգ տղամարդիկ։ Այդ սարսափելի ողջակէզը կարող էր ամէն մարդու վրա սոսկալի տպաւորութիւն գործել, բայց խանի մէջ նա բարձրացրեց ծիծաղ և մի տեսակ գանգային զուարճութիւն։ Նա առանց ժպտելու չէր կարողանում նայել այդ սիրտ կարծրացուցիչ տեսարանի վրա, որպէս նեռոնը նայում էր Հռոմի հրդեհին։ Նա զարմանում էր այդ թշուառների սառնասրտութեան վրա, թէ ինչ խորամանկ միջոց էին ընտրել դարձնելու իրանց վրա խանի բարձր ուշադրութիւնը։ Նրանք գանգատաւորներ էին։ Մի քանի ամրողջ ամիսներ դեգերվում էին խանի չատրների մերձակայքում, բայց ոչ ոք թոյլ չէր տալիս նրանց մօտենալ և իրանց գանգատը յայտնել խանին։ Յուսահատութիւնը ստիպեց դիմել այսպիսի սոսկալի ձեռնարկութեան։ Նրանք օձեցին իրանց մարմինը և հագուստը նաֆթով, նրանք անցեցրին իրանց պարանոցը նոյնպէս նաֆթի մէջ թաթախված հասարներ, և կրակ տուեցին... Այդ բոլորը խիստ ծաղրաշարժ էր թւում խանին։

Մարմինները դեռ ծխում էին։ Թանձր մուխը պատել, պաշարել էր նրանց։ Երբեմն միայն բարակ լեզուների նման յայտնվում էին բոցերի զուտատ չանալիներ, դղրդվում էին, պտտվում էին և խլրտն մարում էին ծխի թանձրութեան մէջ։ Դրանք թշուառ զոհերի վերջին բողոքը, վերջին մրմունջն էին պատայայտում...

Հասարակութեան ուշադրութիւնը այդ միջոցին դարձած էր դէպի մի մանկահասակ պատանի, որ չը կարողանալով դիմանալ կրակի դարշուրանքին, դուրս էր պռծել իր մոր գրկից և ընկած էր խարոյկից հեռու։ Ցանկարծ մի մարդ շուտ վրա հասաւ, ջրով թրջած իր վերարկուն շտապով ծածկեց նրա վրա, և այսպիսով հանգցրեց նաֆթի բոցերով բռնկված նրա հագուստից կրակը։ Յետ քաշելով վերարկուն, նա սկսեց խնամքով մերկացնել մանուկին, որովհետև կախաված հագուստը զարձեալ այրում էր նրա մարմինը։ Մարդը և մինչև անգամ աչքերի թերթերունքը բոլորովին խանձված էին։ Պատանին ուշաթափութեան մէջ էր գտնվում, բայց կեանքի նշոյները խպառ անհետացած չէին։ Երեսի կաշին այրված էր, իսկ մարմնի վրա երեւում էին մի քանի մրկած տեղեր։

—Ինչ պիտի անես այդ լակոտին, Ահմէդ, հարցնում էին նրա շրջապատողները։

—Ես նրան կառողջացնում և ինձ որդի կը շինեմ, պատասխանեց ծերունի Ներքինապետը։

—Գաւուրին, գոչեցին ամէն կողմից զզուանքով։

—Ես նրան մահմեդական կը դարձնեմ։

Թէև ծերունի Ահմէդը հաւատքով ծածուկ քրիստոնեայ էր, բայց այդ խօսքը ասաց նա իր շրջապատողների մոլեռանդութիւնը չը զրգռելու համար։ Լսելով թշուառ գիւղացիների արկածը, նա չտապեց, եթէ կարելի կը լիներ, բոլորին օգնութիւն հասցնել. բայց մինչև իր գալը ամէն ինչ վերջացած էր.... Նա կարողացաւ ազատել այդ մանուկը միայն։

Բայց նրանից առաջ, երբ բոցերը ճարակում էին իրանց բոլոր գժոխային արհաւիրքով, երբ զոհերը մրմնջում էին, երբ թանձր ծխի միջից լսելի էր վերջացած էր.... գոհութիւն... գոհութիւն... հառաչանքը,—նրանց մօտից անցան հայոց ժողովրդի երկու ներկայացուցիչները՝ Մէլիք Ֆրանգիւլը և Մէլիք Դաւիթը։ Երկուսն էլ ՀԱՅՈՅՆ հասկացան եղելութիւնը և այդ թշուառների յուսահատ անճնապանութեան զրդիչ պատճառները։ Մէլիք Դաւիթի դէմքի վրա անցաւ տխրութեան մի ամպ, նա ամրողջ մարմնով սոսկաց, սիրտը ըսկսեց զողդողալ և ոտքերը սկսեցին կարկամիլ։ Այդ խղճի և ցաւակցութեան զգացմունքը չէր, որ այսպէս շանթահարեց նրան. դա եղեռնագործի, դա չարագործի այն սոսկումն էր, որի գաղանային խռովութիւնը անցնելուց յետոյ, յանկարծ տեսնում է իր աչքի առջև անմեղ զոհերը....և նոր է հասկանում յանցանքի մեծութիւնը։ Իրանց անձը այրողները տաթևացիներ էին, Մէլիք Դաւիթի կառավարութեանը յանձնված հարստահարեալներ էին։ «Ուրացողը» այն ատոիճան կրոնասէր էր նրանց, այն ատոիճան ծանրաբեռնել էր գանազան տուրքերով, որ վերջին ժամանակներում անկարող էին վճարել։ Զարգործը նախ սկսեց ծախել տալ նրանց անային կարասիքը, անասունները, իսկ երբ դրանք էլ սպառվեցան, սկսեց այնուհետև վաճառել նրանց դաւակները մահմեդականներին։ Մի այսպիսի բարբարոսութեան անկարող էր համբերել Շաղբատ և ապրուստի ամէն միջոցներից զրկված գիւղացին։ Նա սովորած էր ինչքի և կարի հարստահարութեան, բայց իր սիրելի և կարի հարազատ զաւակների մահմեդական դառնալուն չէր կարող համբերել։ Նա աւելի բարուք կը համբերէր, որ նրանք մեռնէին, ոչնչանային, քան թէ կրօնաներ մեռնէին, ոչնչանային։

Մէլիք Դաւիթի անգթութիւնները փոխ մինչին։ Մէլիք Դաւիթի անգթութիւնները կատարեալ գաղանութեան էին հասնում։ Նա ամանում էր հայերին աւելի քան մի թուրք, մի պարսիկ, կամ մի այլ մահմեդական։ Անճարացած ժողովուրդը կամենում էր զիմել խանին, յայտնել իր ցաւերը և արդարութիւն պահանջել։

Ժողովուրդը յոյս ունէր, որ բռնակալ խանի մէջ կը գտնէ աւելի գութ, աւելի մարդասիրութիւն, քան թէ մի հայ դաւառանի մէջ, որ փառքի և պաշտօնի համար վաճառել էր մինչև անգամ իր կրօնքը։ Բայց խորամանկ Մէլիքը այնպէս փակել էր բոլոր մուտքերը նրանց առջև, որ ոչինչ հնար չէին գտնում իրանց բողոքը հասցնելու խանի ականջին։ Ակսեալ Քաղրաչաչից մինչև վերջին ծառայողը կաշառված էին մեզ մէջքից, որ այդ գիւղացիներին թոյլ չը տան խանին մտնելու։ Մի երկրում, ուր ամէն զատ կատարվում էր բերանացի, կամայական կերպով, ուր դատաւորը մատչելի չէր ամենին, ուր ամէն գործ քննվում էր լոկ խօսքերով միայն,—այսպիսի հանգամանքներում դրանիկների բարեխօսութիւնը կամ նրանց չարախօսութիւնը, ի հարկէ, մեծ նշանակութիւն կարող էր ունենալ գանգատաւորների վերաբերութեամբ։ Դրանիկները կարող էին դէպի ամէն կողմ ծռել դատաւորի կամքը, որը մի և նոյն ժամանակ ժողովրդի տէրն էր։ Դրանիկները կարող էին գործը այնպէս տարբել, որ իշխանը ամենևին տեղեկութիւն չը ստանար, թէ ինչ է կատարվում ժողովրդի մէջ։ Զափազանց անկարգութիւնները կառավարութեան մէջ, մինչև ծնեցնում էն ծայրագոյն միջոցներ նրանց բռնելու համար, այն է ոչնչացնել անիրաւ իշխանութիւնը արդարութիւնը վերականգնելու համար։ Բայց դրա համար ժողովրդի մէջ բաւական կեանք և բարոյական ուժ է հարկաւոր։ Այդ ժամանակներում (և մինչև այսօր Պարսկաստանի մէջ), ժողովուրդը այն ատոիճան մեռած էր, որ սովորական իրերի կարգն էր անցել այն զըբոյցը, թէ «հարիր կը գցեմ բոզաց, կը գնամ խանի դրանը, ինձ կպրեմ»... Դա հարատևարված գիւղացու վերջին յուսահատական խօսքն էր, երբ կամենում էր, որ իր ցաւերի վրա ուշադրութիւն դարձնէին։ Լուկրեցիան խէնջարը ցցելով իր կուրծքի մէջ, անձնասպան եղաւ և իր մահուամբ բողոքեց անարդարական Հռոմի դէմ։ Իսկ հայ գիւղացին մահմեդական իշխանի դրանը իրան պրելով, բողոքում էր սիրտ բրեռնութեան դէմ։

(Կը շարունակվի)